

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ

Աննա Սյուփանյան

Կաֆան արձակ պատմությունների հիման վրա գրված բանաստեղծական ժանր է, որը հայ միջնադարյան քնարերգության մեջ կիրառվեց 10-16-րդ դարերի ընթացքում: Կաֆայի ժանրային կիրառությունն առավել ընդգծեց քնարերգուների՝ սուրբգրային կանոնը բանաստեղծական տարբեր ձևերում կիրառելու նպատակադրումն ու հեղինակային հայեցակարգի առանձնահատկությունները: Հայ կաֆայագիր հեղինակներն են՝ Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին, Զաքարիա Գնունեցին, Հովասափ Սեբաստացին: Կաֆաներ են ստեղծվել կամ թարգմանվել հետևյալ պատմությունների վերաբերյալ. 1. «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն», 2. «Պղնձե քաղաքի պատմություն», 3. «Փահլուլ թագավորի պատմություն», 4. «Մանկան և աղջկա պատմություն», 5. «Ֆարման մանկան պատմություն», 6. «Հայոց թագավորի պատմություն»: Թվարկված պատմությունների կաֆաներում, ի թիվս արձարձած շատուշատ թեմաների, հեղինակների հիմնական շեշտադրումը սուրբգրային կանոնը ներկայացնելն է: Այս առումով հատկապես առանձնանում են Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաները:

Հայաստանում քրիստոնեության տարածմանը զուգահեռ, մեծ ջանքեր են ներդրվել հավատի պահպանման, ամրակայման, քրիստոնեական ավանդները հասկանալի դարձնելու համար: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը Նիկիայի ժողովի կանոնների վրա մասնավոր գլուխներ է ավելացնում՝ իր հոտի ավելի մեծ զգուշության համար. «Ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, սուղ ինչ գլուխս յինքեն է ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել զզուշութեան իւրոյ վիճակին»¹: Փաստը խոսուն է, քանի որ տեքստի հանդեպ ընթերցողի դրսևորած հետաքրքրության ազդեցությունը շատ կարևոր էր: Հայտնի է նաև, որ 5-րդ դարում սաղմոսները ասորերենից և հունարենից արագ թարգմանվեցին հայերեն՝ առաջնային համարելով ժողովրդի լեզվամտածողությանը հա-

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 241:

րազատ դառնալու խնդիրը, լուծելով մշակութային քաղաքականության կարևոր հիմնահարցերից մեկը: Եկեղեցապահական գործունեության պետական ռազմավարություն լինելու մասին է վկայում Հովհաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» իրավական ժողովածուն, որում ընդգծված է եկեղեցական, ծիսական հարցերի քաղաքական նշանակությունը: Վ. Հակոբյանը գրում է. «Կանոնագրքում զգալի չափով տեղ են գտել հայ եկեղեցու դավանանքի և պաշտամունքի ծիսական հարցերը, սակայն դրանք այն ժամանակ՝ միջնադարում ունեին իրենց բովանդակությունը և քաղաքական նշանակությունը, այն է՝ դավանանքի և պաշտամունքի ծիսական հարցերի մշակմամբ պահպանել հայ եկեղեցու ինքնուրույն՝ ազգային դեմքը»¹: Ժամանակաշրջանը, քաղաքական-հասարակական պահանջները ստիպում են հեղինակներին հաշվի առնել կանոնի ընկալման, մեկնաբանման համար անհրաժեշտ գործոնները, այդ թվում՝ ընթերցողի ժանրային, ոճական նախընտրությունները: Կոստանդին Երզնկացին փաստում է, որ մարդիկ այլևս պահանջում էին իրենց սիրելի դարձած գրական ստեղծագործությունների ոճով գրված երկեր. «Այր մի [նստ]ել կայր ու Շահնամայ ասէր ծայնով. նայ եղբարք խնդրեցին թէ ի Շահնամայի ծայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի զբանքըս զայս. ի Շահնամայի ծայն կարդացէք»²:

Ընթերցողի պահանջներին հետևելը, գրականության միջոցով ավետարանական պատգամների ուսուցումը հիմնական շարժառիթ են նաև հայ կաֆայագիրների համար, և զգալի է դառնում հեղինակների զգուշավորությունը հատկապես թարգմանված օտար տեքստերի նկատմամբ: Կաֆաների արձակ պատմությունները լի են արևելյան աշխարհիկ, հեթանոսական կյանքի նկարագրությամբ, և հեղինակները դրանք զուգահեռել են ավետարանական պատմություններին՝ սուրբգրային կանոնը ներկայացնելով խրատաբար: Կաֆայագիր հեղինակները գործում են նպատակադրված. օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացին միջնադարյան ամենասիրելի կերպարներից էր, և նրան խրատելու միջոցով ավետարանական բարոյախոսությունն էր ուսուցանվում ընթերցողին: Ուշագրավ է, որ Խաչատուր Կեչառեցին հիշատակարաններից մեկում գրում է Ալեք-

¹ Կանոնագիրք Հայոց, Աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Հ. Ա, Երևան, 1964, էջ XV:

² Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Աշխատասիրությամբ՝ Արմենուի Սրապյանի, Երևան, 1962, էջ 209:

սանդր Մակեդոնացու կերպարի դրական ազդեցության և ընթերցողի համար «անխոտորնակ ճանապարհ» բացելու շարժառիթով գրած կաֆաների մասին¹: Հեղինակն ընտրում է լավագույն լուծումը. կաֆաներում գլխավոր կերպարներին խրատել-սովորեցնել սուրբգրային ճշմարտությունները, ավետարանական պատմությունները դարձնել կերպարների հետ զրույցի հիմնական թեմա՝ ընթերցողին ակամա մասնակից դարձնելով այդ երկխոսություն-խրատին:

Պղնձե քաղաքի, Փահլուլ արքայի պատմությունների կաֆաներում, Հովասափ Սեբաստացու «Աշխարհիս սահմանն է հանց» տողով սկսվող կաֆայաշարքում հեղինակները միավորում են խոհափիլիսոփայական թեմաներն ու դրանց ավետարանական ընկալումները. «Երկիր պա՛գ անմահ Բանին, թաալէ զերեսդ ի հողին, // Ձի յայն մոխրէն է ըզքեզ ըստեղծեր ի յիւր նըմանին. // Ձայս կեանքս քանի սիրես, պի՛տ երթաս դու ներքև հողին. // Մի՛ անշահ կենօք կենար, մի՛ փոխեր զոսկիդ պըղընձին»²: Կամ՝ «Աշխարհիս սահմանն է հանց. // Միտք արայ գրոց բաներուն. // Երանի տայ աղքատաց, // Թէ՛ նոցա՛ է արքայութին, // Եւ վա՛յ մեծատանցն ասէ, // Որ չտան բաժին իր հոգուն. // Դժար է հպարտութին, // Սադայել է ընկեր նորուն»³:

Հոգու և մարմնի խնդիրը, որ նաև քնարերգության կենտրոնական թեմաներից է, կաֆաներում նույնպես ներկայացվում է Միջնադարին հարազատ խորհրդանշանային համեմատություններով. «Ջանամ թէ՛ զհոգիս սիրեմ, նա մարմինս ինձի կուտայ խափ, // Ձինչ որ խոյանայ բազան ի կաքան ու առնու ի յափ. // Կուտեցաւ առ իս շատ մեղք յայն նըման որ երբ գայ շառափ. // Խոցեր եմ մահու վախովն և եղեր սիրտըս զերդ շաղափ»⁴: Տաղերգության մեջ հոգու և մարմնի պայքարի խորհրդանշաններից են վարդն ու սոխակը, տվյալ կաֆայում՝ բազեն ու կաքավը: Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաներում նույնպես նման զուգահեռումները մեծ թիվ են կազմում. «Է Ադամայ որդիք //Թափեցէք զգի-

¹ Տե՛ս **Յ. Տաշեան**, Ուսումնասիրությունք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 90:

² **Արշակ Չոպանեան**, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 88:

³ **Հովասափ Սեբաստացի**, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 129:

⁴ **Արշակ Չոպանեան**, նշվ. աշխ., էջ 89:

նին ի ձեզնէ, // Երբ զմարմինըդ պարարես // Նայ զհոգոյ բաժինդ պատրաստէ... // Յերակ դուք պատրաստ կացիք, // Եւ զմահու օրըն միշտ յիշէ...»¹: Կաֆայագիրները հիշեցնում են Ահեղ դատաստանի, մեղավորների՝ դժոխքի հրին մատնվելու մասին, և հատկապես ավետարանական այս «հիշեցումներն» ընթերցողին են փոխանցում ժողովրդական երգերի ոճամտածողությամբ. «Է՛ մարդ, մի՛ զհոգիդ դատեր և զմարմինդ առնել սիրելի. // Դարձիր ի մեղաց ճամբէն, որ չլինիս ողորմ ու լալի. // Ջանայ՛ և բարի գործէ՛, զի կարուանըն քեզ կու հայի. // Եւ յայս հողըս հանց գընա, որ հոգիդ հըրոյն չը լինի»²: Կամ՝ «Արթուն և պատրաստ կացիք. // Պատասխան տալոյ էք գործոյն // Վայ այն Ադամայ որդոյն, // Որ չունի ահ իսկի մահուն»³: Կամ՝ «Ես, որ ի տապանս իջայ, // Նայ դարձայ ի հող և ի փոշի. // Ոչ գալ և ոչ գնալ ունիմ, // Ոչ խաւսել բանիկ մի քանի. // Կամ տարեկուսեալ աստէն, // Թէ մեղաց գիրըս մեր ջընջի, // Յառնեմք յարութեան աւուրն, // Որ գոչէ փողն հրաշալի»⁴: Պղնձե քաղաքի պատմության կաֆաներում զուգորդվում են Ունայնության ու պատժի գաղափարները. «Գերի՛ Ադամայ որդի, է՛ր դատիս զամէնն հետ մեղաց. // Յիշեա՛ զանաչառ ատեանն ու ծեծէ՛ սրտիկըդ ու լաց. // Զի՛ս տես ու քեզ ճար արայ ու խափան կացիր ի մեղաց. // Թէ չէ յաներեկ աւուրն տի այրիս ի հուրըն անանց»⁵: Կաֆան, իր բանաստեղծական չափով, թեմատիկ ընդգրկմամբ, քիչ էր տարբերվում հայրենից, իսկ վերջինս ընդունված ժանր էր՝ շնորհիվ ժողովրդական խոսքի ու մտածողության հարազատության: Այս նկատառումով կարելի է պայմանավորել Ահեղ դատաստանի մասին հիշեցնող կաֆաներում ժողովրդական երգերի լեզվաոճական նմանությունը և հեղինակի շեշտած գաղափարի տարածման արդյունավետությունը:

Մարդու մեղսակրության, դրախտից վտարվելու թեմաները կաֆաներում ներկայացված են նաև հեթանոսական կերպարների ու պատմությունների համեմատական օրինակներով. «Աւճն էր կորըստեան պատ-

¹ **Գարեգին Հովսեփյան**, Գրիգորիս Աղթամարցի (Գրական-կենսագրական նոր նիւթերով), «Արարատ», ԾԲ տարի, Յունուար-դեկտեմբեր, Ս. Էջմիածին, 1919, էջ 29:

² **Արշակ Զօպանեան**, նշվ. աշխ., էջ 90:

³ **Գարեգին Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 30:

⁴ **Զաքարիա Եպիսկոպոս Գնունեաց** եւ իւր տաղերը, Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Ակինեան, Վիեննա, 1910, էջ 69-70:

⁵ **Արշակ Զօպանեան**, նշվ. աշխ., էջ 87:

ճառ // որ եհան զԱդամ ի դրախտէն. // Հանց Նեգտանիբոս արար՝// զկինն եհան ի Փիլիպոսէն. // Ի կերպ վիշապի դարձաւ, // եւ գոչեաց սաստիկ մեծաձէն...»¹: Մեկ այլ կաֆայում հեթանոս դավաճան կերպարը համեմատվում է Հուդայի հետ. «Կասանդրեա՛ խաբեալ Ուղղոս // մատուցե՛ր դեղ մահաբոս. // Չանհանդուրժա՛կն եւ զնեղոս // ոչ դադարէր յաման նիւթոյս: // Աւաղ չարեացըն սոր եւ սոս, // որ չար գործեաց մեծ՝ ւ ափսոս, // Չի Յուդայի նման Ուղղոս, // որ եւ մաղնեաց զՅիսուս Քրիստոս...»²: Ալեքսանդրի պատմության կաֆաներից մեկում Նեգդանիբոս Երկրորդ փարավոնի՝ դժոխքում հայտնվելու նկարագրությունը առաջին հերթին հետաքրքրական է դառնում հեղինակային նկարագրության շնորհիվ. «Ծե՛ր դու, դառնացեալ ոգով, // ի դըժոխքն իջեր արուեստով, // Տեսեր զԲելիար գընդով, // զկամրարքն ընդ իւր խորհըրդով, // Չտարտարոս հուր գեհենին // ըզտանջանքն անգերծանելով, // Չպաշտանեայք խաւարային // զչար իշխանքըն Սադայելով»³: Ստորերկրայքի այս տեսարանը՝ «Բելիարն իր գնդով, տարտարոսի չներող հուրը, խավարի պաշտոնյաները, Սադայելի չար իշխանները», կարծես, հեղինակը նկարում է:

Ալեքսանդրի պատմության կաֆաներում հեղինակի «գրուցակիցներից» մեկը Խիկար Իմաստունն է. «Վա՛յ տամ քեզ հազար բերան, // ո՛վ Խիկար, խելաքդ աննըման. // Թէ է՛ր մոլորիս յայդ բան // ու պաշտես պատկեր դիւական. // Ծանի՛ր զարարիչն աստուած, // որ երեստ քեզ միտք բանական.// Թէ չէ ի յաւուր դատման // ընկընիս ի հուրն անշիջան»⁴: Խիկար Իմաստունի խրատները վաղուց թարգմանված էին ու ծանոթ հայ ընթերցողին⁵: Կաֆաներում Խիկար Իմաստունը «չեզոք գրու-

¹ **Չաքարիա եպիսկոպոս Գնունեաց** եւ իւր տաղերը, էջ 70:

² Նույն տեղում, էջ 67:

³ Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ, Աշխատասիրութեամբ՝ Հասմիկ Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 96:

⁴ Նույն տեղում, էջ 134:

⁵ Ա. Մարտիրոսյանը գրում է, որ Խիկարի գրույցը արևելյան ծագում ունի, տարածված է եղել տարբեր երկրներում: Արդեն Ներսես Շնորհալու ժամանակ նրա անունը ընդհանրացված է եղել իբրև հասարակ անուն՝ իմաստուն նշանակությամբ: Տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, «Խրատք եւ իմաստութիւն Խիկարայ» գրույցի հայերեն թարգմանության հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1960, N5, էջ 77:

ցակից» է, որի խրատներն ընդունելի են հեղինակի համար, սակայն նրա «սխալը» քրիստոնեություն չդավանելն է: Կաֆայագրի միտումը ընթերցողին այս ուղղորդումը փոխանցելն է:

Մեծ են տնօրինական¹ կաֆաների թիվը, որոնցում ներկայացված են հինկտակարանային պատմությունները. «Ադամ ձեռաքն Եւայի, // ՚ի ի յանճառ լուսոյն զըրկեցան. // Տէրն եկեալ ձայնէր. ո՞ր ես. // նա լալով աւեր թէ մերկ կամ. // Թագեան թզենեաւ սփածան // ՚ի ի նոյն ժամն ի դրախտէն ելան. // Անմահ մնալոց էին, // բաց անկան եւ աղտեղեցան...»²: Կամ՝ «Տէր մանուկ, տըղայ պարոն // յայս կըղզիս այսաւր երևել, // Անուն ըզքաջանց առել // և կառաւքըդ հանդիսացել, // Չինչ զԴաւիթ ի մարտ մըտէր, // զԳողիաթ ի վայր կործանէր, // Ոստըս ձիթենոյ առել, // անթառամ թագիւ պըսակել»³: Հ. Սիմոնյանի դիտարկմամբ՝ տնօրինական այս կաֆաները բովանդակային հիմքում ունեն ոչ թե Ալեքսանդրի պատմության սյուժեն, այլ աստվածաշնչյան որոշ դրվագներ, և այդ պատճառով նման կաֆաները համարում է ավետարանական թեմաներով հյուսված ինքնուրույն բանաստեղծություններ, որոնք երբեմն ունեն համեմատության եզրեր տարբեր կերպարների հետ⁴:

Բավական մեծ թիվ են կազմում Հովասափ Սեբաստացու տնօրինական կաֆաները: Հեղինակի գրական ժառանգության թեմատիկ բաժանում կատարելիս Գարեգին Հովսեփյանը նրա կաֆաները բնորոշում է որպես խրատական և հոգևոր երգեր⁵: Հեղինակի կաֆաներում մշտապես առկա է երկնային շնորհին արժանանալու, արթուն ու զգաստ լինելու խրատը. «Յիշէ զբանս Աւետրանին // Իմաստուն կուսանքն, որ կարդան, // Պատրաստ և արթուն կացին, // Լապտերաւք մտան հարսնարան. // Յիմարս ո՛չ պատրաստեցի // Իւղ հոգոյս՝ ինձի պիտևան. // Վա-

¹ Տնօրինական են այն կաֆաները, որոնք իրենց հիմքում ունեն ոչ թե արձակ պատմության սյուժեն, այլ ներկայացնում են աստվածաշնչյան դրվագներ: Տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Աշխատասիրութեամբ՝ Հասմիկ Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 520:

² **Չաքարիա Եպիսկոպոս Գնունեաց** եւ իւր տաղերը, էջ 71:

³ Տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, էջ 112:

⁴ Նույն տեղում, էջ 520:

⁵ Տե՛ս **Գարեգին Հովսեփյան**, Հովասափ Սեբաստացի, «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, ԾԱ տարի, Ապրիլ-դեկտ., համ. Դ-ԺԲ, էջ 234:

խեմ՝ արտաքսեն զգերիս. //«Ե՛րթ ի բաց, անպետ և անբան»¹: Շատ կաֆաներում զգալի է միայն կանոնը ներկայացնելու՝ հեղինակների նախապատվությունը՝ ի հաշիվ արտահայտման գեղարվեստականության, սակայն Հովասափ Սեբաստացու կաֆաները առանձնանում են պատկերավորությամբ, դիպուկ նկարագրությամբ: Ոգենորոգ սննդի մասին հետևյալ կաֆան օրինակներից մեկն է. «Սեղանն բարեալք լցած՝// Կերակրիլ՝ ամէնն յազենան. // Տէ՛ր, տո՛ւր հաց կենաց առատ, // Որ հոգիս բարեալք լիանան»²: Հովասափ Սեբաստացին ավետարանական պատմությունները ներկայացնում է նաև պարականոն պատմություններին զուգահեռ՝ շատ հաճախ ներհյուսումներով³, անձնական ապրումների դրսևորումներով, օրինակ՝ «Կաֆայ վասն աղէկ մանկանն Գրիգորի» եղբոր մահվան առթիվ գրված ողբախառն երկը: Հեղինակը սուրբգրային կանոնի անխախտ հետևողն է, ավետարանական պատգամների քարոզողը, սակայն կարևորում է ճակատագրի, «ֆրիկյան չարխի» գործոնը մարդու կենսընթացի որոշման գործում. «Չարխն խոլընեց եղբաւրս // Եւ կտրեց զարևն յաւերուն, // Ո՛չ խնայեց ծեր մաւրկան, //Ո՛չ եղբաւրն և ո՛չ որբերուն»⁴:

Կաֆայագիր հեղինակների ստեղծագործական-անհատական նախընտրությունների դրսևորման և կանոնի մեկնության ընկալման առումով ուշագրավ են Քրիստոս-Ալեքսանդր Մակեդոնացի համեմատական կաֆաները. «Այդ շիբլ ու կերպդ ահեղ, որ կա, // Բայց որ առնէր զքեզ վեհակայ. // Տէր անդրանիկ և մեծ արքայ // Եւ աննախանձ քո ձևդ, որ կա, // Խելալք Խիկար ես յԱդամայ, // Ծընընդոց ազանցըն հանրակայ, // Ծովածաւալ ստորակայ, // Լերանց բարձացըն բարձրակայ, // Արագամիտ դու մետաքսեայ, // Քաջազնաբարըդ առ սըմա // Դու ես նըման տէրն, որ գայ, // Որոյ անունն է Մեսիա»⁵: Կամ՝ «-Դու ես նման տէրն, // Որ գայ նորէն մեսիայ. // Տէր և աստուած մեծ արքայ, // Որ է արհնեալ ովսան-

¹ Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, էջ 135:

² Նույն տեղում, էջ 136:

³ Տե՛ս Մատթեոս աբեղա Պողոսյան, Հովասափ Սեբաստացու «Վասն լինելութեան արարածոց» եւ Տնօրինականքի չափածո մեկնությունները, «Էջմիածին», 2008, N 2-է, էջ 38: <http://echmiadzin.asj-oa.am/3566/1/36-57.pdf>:

⁴ Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, էջ 116:

⁵ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, էջ 146:

նայ»¹: Համեմատվողը Ալեքսանդր Մակեդոնացին է, կենտրոնական կերպարը՝ Քրիստոսը: Հեղինակը Ալեքսանդր Մակեդոնացու հետ զրուցում է՝ նրա ապրած ժամանակը ներկա դարձրած, և հիշեցնում է Մեսիայի գալստյան մասին: Կարծես, ընթերցողի համար չի խախտվում դեպքերի ընթացքը, և նման զուգահեռներ անցկացնելու «պատճառը» համոզիչ պիտի լինի հատկապես նրա համար: Կաֆայագիրը ներկա է դարձնում Ալեքսանդրի ժամանակը՝ «մոտեցնելով» Մեսիայի գալուստը, փրկության պահը: Կարծում ենք՝ հեղինակի դիտարկումը բխում է Դանիելի մարգարեության մեկնության իմացությունից: Դանիելի տեսիլքի համաձայն, երբ չորս գազանների իշխանությունը վերացավ, ամպերի միջից երևաց հավիտենական իշխողը՝ մարդու Որդու նման²: Ս. Ջերարդի ուշագրավ դիտարկմամբ, Դանիելի տեսիլքի կենտրոնական կերպարներից մեկը Ալեքսանդր Մակեդոնացին է (Դանիել 2,7,8), որի իշխանության վերացումից հետո մարգարեն տեսնում է Մեսիայի գալուստը³: Ալեքսանդրից հետո գալու է Մեսիան: Ահա այս մեկնությունը նկատի ունի Խաչատուր Կեչառեցին: Իր հիշատակարաններից մեկում կաֆայագիր հեղինակը ներկայացնում է Ալեքսանդր Մակեդոնացու կերպարին անդրադառնալու շարժառիթը՝ մանրամասնելով, որ հոգևոր հայրերի և աշակերտների հանդեպ սերն ու հոգաձությունը ստիպում են վիպասանական հմտությամբ գրել Քրիստոսի տիպ և գաղափար ընկալվող աշխարհակալ Ալեքսանդրի մասին. «Աստուածազան խնդիր հարանց հոգետորաց եւ համշիրակ համբակաց՝ եւ համական եւ մշտաշարժ սիրով ստիպել զմեզ ի բարառնական վիպասանութիւն բանին արհեստից՝ արտաճառել սակաւ պարութայի զաշխարհակալ իմաստունն, որ **տիպ եւ գաղափար** եղել ճշմարիտ երկնաւոր թագաւորին (ընդգծումները մերն են-Ա.Ս.)»⁴: Ալեքսանդր Մակեդոնացու՝ Քրիստոսի նախակերպար և նախատիպ համարվելու վերաբերյալ են մշակվել գիտական տեսություններ⁵: Ուսումնասի-

¹ Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N3387, թերթ 38:

² Դանիել 7:12-14

³ Տե՛ս **Stephen Girard**, Alexander the Great and the Rise of Christianity, Bowdoin College, 2021, p. 38. <https://bit.ly/3A37JIP>

⁴ **Յ. Տաշեան**, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, էջ 103:

⁵ Տե՛ս **A. Ehrhardt**, Jesus Christ and Alexander the Great, The Journal of Theological Studies, Vol. 46, No. 181/182 (January/April 1945), pp. 45-51., **Ory Amitay**, From Alexander To Jesus.

րողներից Ս. Ջերարդը համեմատում է Ալեքսանդր-Հերակլես, Ալեքսանդր-Քրիստոս կերպարները¹: Նա գտնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին սիրելի կերպար է, որովհետև «Աստծո որդի» արքետիպի կրողն ու փոխանցողն է, ռասսայական խտրություն չդնող եղբայրության հայեցակարգի կրողը: Ուսումնասիրողը դիտարկում է Հերակլես-Ալեքսանդր-Քրիստոս կերպարային աստիճանական զարգացումը. Հերակլեսը ռազմիկ է, և որպես հերոս՝ սա է նրա դերը, առավելությունն ու առաքելությունը: Ալեքսանդրը փիլիսոփա թագավոր է, մարդ, ով ունի առաքինություններ, ռազմիկ է, բայց նաև ունի փիլիսոփայական միտք և կարող է տեսնել աշխարհի ամենաբարձր ու վեհ երևույթները, նույնիսկ՝ Աստծուն: Ռազմիկից փիլիսոփա այս անցումը գազաթնակետին է հասնում Հիսուսի կերպարում՝ իբրև Քրիստոս, հերոս, ով հրաժարվում է ֆիզիկական բախումից՝ հոգուտ հոգևոր պատերազմի և իր ժողովրդին առաջնորդում է որպես աստվածայնությամբ ոգեշնչված փիլիսոփա, ով հաղթում է ոչ թե սրով, այլ գաղափարներով²:

Ինչպես Կոստանդին Երզնկացին, Խաչատուր Կեչառեցին ևս ստիպված էր լրացուցիչ պարզաբանումներ ներկայացնել՝ գրելով, որ լավ է գիտակցում հեթանոսական տեքստերի «անմիաբան», անկապակից լինելը. «Նա՛ գի հեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուջ՝ ի վերոյ շաղկապեալ բանիք որակացեալ, և ներքոյ լի սնոտի կարծեօք և խաբէութեամբ»³: Խաչատուր Կեչառեցու կատարած կերպարային զուգորդումները նկատի առնելով՝ Մանուկ Աբեղյանը կարևորում է հեղինակի ստեղծագործական ազատախոհությունը և ենթադրում է, որ Խաչատուր Կեչառեցու վերոնշյալ բացատրությունը գրված է Կեչառուքի միաբանների ստիպողական պնդմամբ⁴: Կարելի է ենթադրել, որ Խաչատուր Կեչառեցին կաֆայում ներկայացրել է Դանիելի մարգարեության մեկնությունը: Նման ենթադրության համար կարևոր է Դանիելի մարգարեությանը քա-

Berkeley, CA, 2010, **Stephen Girard**, Alexander the Great and the Rise of Christianity, Bowdoin College, 2021.

¹ **Stephen Girard**, նշվ. աշխ., pp. 24-27, 63-64.

² Նույն տեղում, p.77, 78.

³ **Յ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 88:

⁴ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք երկրորդ, ԺԱ.-ԺԹ. դարի 30-ական թուական, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 234, 235:

ջածանոթ լինելու փաստը հաստատող հետևյալ կաֆան. «Դանիել մարգարեին // Ձծովն ետես չորք հողմ բախէին. // Չորս գազանք ելանէին, // Չար յետին էր քան զառաջին. // Արինակ թագաւորաց // Պովրոսի, պարսից Դարեհին. // Աղէկսանդր զՄակեդոնին // Չար ժանեալքն էր, նըման Նեռին»¹: Ալեքսանդր Մակեդոնացու վերաբերյալ տեսական աղբյուրներում հիմնավորված է այն փաստը, որ Դանիելի մարգարեության մեջ հիշատակված է աշխարհակալ Ալեքսանդրը: Դանիելի տեսիլքում չորս գազանները չորս աշխարհակալ տիրակալներն են, որոնցից վերջինն է Ալեքսանդր Մակեդոնացին, որի իշխանության վերացումից հետո եկավ Մեսիան²: Կաֆաներում հեթանոս աշխարհակալը սուրբգրային կանոնի խրատառուներից է, որովհետև ընթերցողի սիրելի կերպարն է, և հեղինակին այլ ելք չի մնում, քան կանոնը խրատել նրա միջոցով. «Մարմինն է ի խոտ նըման, // որ ծաղկի՝ Դաւիթ վկայեց. // Եւ փուք է քամու նըման, // Յոր ասաց, ՚ի Ելիփազ գրեց. // Սողոմոն ստուէր երգոց, // Եսայի նոյնպէս վըկայեց. // Սքանդա՛ր, դու քեզ պէ՛տ||արա, // զի արինն ոչում չի մարսեց»³: Գլխավոր կերպարը յուրօրինակ «միջնորդ» է հեղինակի և ընթերցողի միջև, հեղինակի ասելիքի փոխանցողն է: Կաֆայագիրը չի խուսափում Քրիստոսին տրվող ավետարանական բնորոշումներ կիրառել Ալեքսանդր Մակեդոնացուն գովերգելիս. «Նախախնամողըն վերին // զքեզ ընտրեաց յազգէս հողաձնին. // Ի յերկնէ գովեալ ես դու // ՚ի հրեղեն զաւրացն անմարմին. // Գովեալն ի ծընդունդս կանանց, // նըմանիս ի մեծն ամլորդին. // Կուսական անախտութեամբ՝ // ի բարձեալ բանըն միաձին»⁴: Ալեքսանդր Մակեդոնացու ծնունդը կապվում է վերին նախախնամության հետ և միաժամանակ համեմատվում է Քրիստոսի անաղարտ ծնունդի հետ: Իսկ Չաքարիա Գնունեցու կաֆաներից մեկում համեմատվում է սրբազան գաղափարը. Ալեքսանդրի՝ ծանր փորձությունից փրկվելու առասպելը համեմատվում է Քրիստոսի հարության խորհրդի հետ. «Արինակ երեքաւրեայ էր // թաղման փրկչին յարութեան, // Թքմամբ ելեալ ի Նինուէ // գոյժ տայր քաղաքին կործանման: // Նըման համեմատ սորայ // Աղէկսանդր Մակեդոնացի, // Ապակէ տաղաւարաւք // ծովն իջե-

¹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 5472, թերթ 17:

² Տե՛ս **Stephen Girard**, նշվ. աշխ., p. 38.

³ Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ, էջ 137:

⁴ Նույն տեղում, էջ 107:

ալ յանդընդականի, // Եղջեր երգեհոն թմբուկ // եւ ցընծղայս քընար տասնաղի...»¹:

Այսպիսով՝ կաֆայի ժանրակիրառմամբ առավել ընդգծուն է դառնում հեղինակի ստեղծագործական-անհատական դիրքորոշումը սուրբգրային կանոնի և այն խրատաբար ներկայացնելու շարժառիթների վերաբերյալ: Ի հակադրություն կաֆաների արձակ պատմություններում ներկայացվող աշխարհիկ կյանքի՝ կաֆայագիր հեղինակն ընթերցողին հիշեցնում է հոգու և մարմնի պայքարի, Ահեղ դատաստանի, արթուն ու պատրաստ լինելու քրիստոնեական պատգամների մասին: Կաֆայագիր հեղինակները զուգահեռումներով են ներկայացնում ավետարանական և հեթանոսական կերպարներին՝ Քրիստոսին և Ալեքսանդր Մակեդոնացուն: Վերջինս ավետարանական բարոյախոսության գլխավոր խրատառուն է, քանի որ հեղինակը կարևորում է ընթերցողի սիրելի կերպարի միջոցով սուրբգրային կանոնը ուսուցանելու միտումը: Փաստը խոսում է կաֆայագրի՝ մշակված հայեցակարգով ստեղծագործելու մասին, ինչն էլ ընդգծում է հայ միջնադարյան հեղինակային հայեցակարգի առանձնահատկություններից մեկը:

***Բանալի բառեր**- կաֆա, Խաչատուր Կեչառեցի, հայրեն, Ջաքարիա Գնունեցի, սուրբգրային կանոն, Ալեքսանդր Մակեդոնացի, Ահեղ դատաստան, հոգու և մարմնի պայքար, Հովասափ Սեբաստացի, Պղնձե քաղաքի պարմություն, հեղինակային հայեցակարգ*

ПРИМЕНЕНИЕ БИБЛЕЙСКОГО ПРАВИЛА В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ КАФА

Анна Степанян

***Ключевые слова**-Кафа, Хачатур Кечареци, Айрен, Захария Гнунечи, библейское правило, Александр Македонский, Судный день, борьба души и тела, Ховасап Себастаци, история Медного города, авторская концепция*

С применением жанра Кафа наиболее подчеркивающей становится творческо-индивидуальная позиция автора касательно библейского правила и

¹ **Ջաքարիա եպիսկոպոս Գնունեաց** եւ իւր տաղերը, էջ 75:

мотивов его наставления. В отличие от светской жизни, представленной в прозе рассказов Кафа, автор напоминает читателю о борьбе души и тела, о Страшном суде, о бодрствовании и готовности к христианским заветам. Авторы кафа параллельно представляют евангельских и языческих образов-Христа и Александра Македонского. Последний является главным проповедником евангельской морали, поскольку автор придает большое значение тенденции преподавать священное правило посредством любимого образа читателя. Факт говорит о творчестве кафа с разработанной концепцией, что подчёркивает особенности средневековой армянской авторской концепции.

APPLICATION OF HOLY BIBLE RULE IN ARMENIAN MEDIEVAL KAFANS

Anna Stepanian

Key words-*Kafa, Khachatur Kecharetsi, Zakaria Gnunetsi, Holy Bible rule, Alexander the Great, judgment, struggle of soul and body, Hovasap Sebastatsi, History of Copper City, author's concept*

The use of the Kafa genre makes the author's creative-individual position on the motives of the biblical rules and instructively to present about motives. In contrast presented in the prose stories of Kafa to the secular life, the author of the Kafa reminds the reader about the struggle of the soul and body, the terrible judgment, and being awake and ready for Christian messages.

The authors of Kafa present with parallels evangelical and pagan characters: Christ and Alexander the Great. The latter is the main instructor of evangelical morality, as the author uses the tendency to teach the biblical rule through the reader's favorite image. The fact speaks about the creation of Kafa with an elaborate concept, which emphasizes one of the peculiarities of the Armenian medieval author concept.

Աննա Ստեփանյան – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի Հայ գրականության պատմության ամբիոնի ասիստանտ

Анна Степанян – Аспирантка кафедры истории армянской литературы ЕГУ

Anna Stepanyan – PhD Student at the Chair of Armenian Literature of the Faculty of Armenian Philology of YSU